

զերիս քահանայս եւ զերկուս սարկաւագունս ի
յեկեղեցին Հայոց, յորոց մինն էր Մօնսինեօր
Դասպանն, որ է այժմ այդր։»

Հետեւեալ (Հինգերորդ) նամակին մէջ
առ Մխիթար Աբբայ (Դիւան Մխ. Վննետ.) կը
յիշատակէ սոյն ձեռնագրութիւնը եւ ուրիշ
ազգային դէպքերու պարագաներ։

Տեսուն Տեսուն Միխիթարայ Դեռասիայոյ ղար-
դասկերի, եւ պերճիմաստ Աստուածաբանի մեծի,
եւ մերսագնից պարծանաց թագի՝ նուիրեալ բն-
ծայեմ՝ զՅիսուսակիւր ողջոյնն, Ողջ կերով քո ի Տէր։

Թէպէտ մտրակեցեալ ի հարկեցուցէ ստի-
պանաց կրիցս սիրոյ՝ որքան ի յանցելումն այնքան
ի միւսումն շաբաթով ի վարանս եղէ քանիցս՝ առ
ի գտանել թերեւս զնիւթ իմն յարմար, անթիւ
որով մարթանայցէի վեհանձնութեան քոյ, գոնէ
իբրու սոսկ ողջունագիր լիցի դրել. աղագաւ բաւ
առնելոյ տենչանաց սրտիս միայն որ առ ձերդ գե-
րափառութիւն։ Բայց ի ըստ սրտի իմոյ ոչ գտա-
նելն իմ զայնպիսի առարկայ ինչ՝ շուրջ զորով
երկարիցէի շրթամբք գրչի զխօսիյն. բաւական վար-
կայ փոխանակ առարկայի փոխարինել զտէրն իմ
պարզ, եւ զիղձն իմ ջերմեռանդ, որ առ սրբազան
անձնդ, եւ առ սրբազնային անձինս որ ընդ քեւ։
Եւ կամիմ թէ վարկցէ քոյդ գերամեծար հայրու-
թիւն զգրիլն այսորիկ քարտիղի առ քեզ, ոչ վասն
այլոյ՝ սեւիցէ իրաց, եթէ ոչ սակս պարզագունի
սիրոյ՝ որով սիրէ զհաղարիցս արժանիդ սիրոյ եւ
զսիրեցեալդ ի Տեառնէ սիրով մասնականաւ։ Այլ
եւ զհայածմանէն, զոր արդէն լցեալն սպառնալեօք՝
փաթրիկն Հայոց ըստ անուան, եւ ըստ գործոյն
համանման Յակօբկայ՝ հալածէ զեկեղեցիին՝ լուաք։
Զի՞նչ ասեմ. Տէր Յիսուս զգաստութիւն տացէ
այնց անմտաց, որ զայդ կատաղեցեալ գայլդ ի